8626

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

« 23 » 06 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0108-21

Ձեռնարկողը՝ ***«Դրախտիկա» ՍՊԸ***
Ք. Սևան, Ձկնորսների 5

Գործունեությունը՝ ***Շողակաթ համայնքի Դրախտիկ գյուղի 1-ին փողոցի 62 հողամասում նախատեսվող հանգստի գոտու կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Գեղարքունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0108-21

<23> 06 2021թ.

Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնքի Դրախտիկ գյուղի 1-ին փողոցի 62 հողամասում նախատեսվող հանգստի գոտու կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ,

Ձեռնարկող՝	«Դրախտիկա» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Գեղարքունիքի մարզ, Դրախտիկ գյուղ

Ներածական մաս. Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնքի Դրախտիկ գյուղի 1-ին փողոցի, 62 հողամաս հասցեում նախատեսվում է կազմակերպել անհատական հանգստի գոտի: 30.06.2014թ. ընկերությունը նախատեսվող գործունեության համար օրենքով սահմանված կարգով ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ստացել է ԲՓ-39 փորձաքննական եզրակացությունը, սակայն հաշվի առնելով տեղի ունեցած նախագծային փոփոխությունները, առաջացել է նոր փորձաքննության կարիք: Հանգստի գոտու աշխատանքային նախագիծը իրականացվել է գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Նախատեսվող գործունեության նպատակն է կազմակերպել ժամակակից բազմաֆունկցիոնալ հանգստի գոտի:

Նախատեսվող գործունեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի ա. ենթակետի, հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Գեղարքունիքի մարզի Դրախտիկա գյուղի 1-ին փողոց 62 հողամասի հասցեում նախատեսվող անհատական հանգստի գոտու նախագծային աշխատանքներին հիմք են հանդիսացել Շողակաթ համայնքի ղեկավարի կողմից տրված 2019 թվականի հունիսի 13-ի թիվ 5 նախագծային թույլտվությունը /ճարտարապետահատակագծային առաջադրանքը/, «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և «Դրախտիկա» ՍՊԸ-ի միջև 2004 թվականի սեպտեմբերի 28-ի կնքված Դրախտիկ գյուղի ափամերձ հատվածում 1.5 հա հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման N 204 պայմանագիրը: Կառուցապատումը նախատեսվում է իրականացնել ՀՀ Կառավարության 2008թ. դեկտեմբերի 18-ի թիվ 1563-Ն որոշման տեխնիկական բնութագրերի Սևանա լճի կենտրոնական գոտում կառուցապատման համար

նախատեսված տարածքների գոտևորման նախագծի պահանջներին համապատասխան: Կառուցապատման ենթակա տարածքը գտնվում է «Սևան ազգային պարկ» ռեկրեացիոն գոտիում:

Նախագիծն իրենից ներկայացնում է հանգստյան գոտի իր օժանդակ շինություններով:

Ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի շինությունների առավելագույն բարձրությունը թույլատրվում է 7մ: Հեռավորությունը Սևանա լճից՝ 50-60մ: 1905.0մ բացարձակ նիշից ցածր տարածքում հիմնական շինություններ չի նախատեսվում: Նախատեսվող շինարարական աշխատանքների ընթացքում ծառահատում չի իրականացվելու: Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տնկել թվով 50 հատ փշատերև ծառ, մասնավորապես՝ կաղնի, գիհի, սոճի: Տարածքի հետագա կանաչապատման համար կմշակվի արդիականացման և կանաչապատման նախագիծ և կհամաձայնեցվի այն «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հետ: Կառուցապատման ենթակա տարածքը չկառուցապատված է, միջին թեքություններով, մասամբ անտառածածկ: Հողամասի 63.7% գտնվում է 1905,0մ բացարձակ նիշից բարձր տարածքում: Հեռավորությունը ավտոմայրուղուց 18մ: Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնապահպանական, գործառնական նշանակությունը՝ հանգստի գոտու կազմակերպման: Հողատարածքին կից տեղակայված են «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հատուկ պահպանող հողատարածքները: Հանգստի գոտում նախատեսվում է կառուցել չորս տեսակի տիպային քոթեջներ՝

1 տիպայնի քոտեջի հիմնական բնորոշիչներ՝

- կառուցապատման մակերես՝ 313քմ,
- բնակելի մակերես՝ 422 քմ ,
- համարների քանակ՝ 12 համար,
- հանգստացողների քանակ՝ 24 անձ:

Նախատեսվում է կառուցել 3 հատ նմանատիպ քոտեջ:

2 տիպայնի քոտեջի հիմնական բնորոշիչներ՝

- կառուցապատման մակերես՝ 145.7քմ,
- բնակելի մակերես՝ 127.9քմ ,
- համարների քանակ՝ 2 համար,
- հանգստացողների քանակ՝ 4 անձ:

Նախատեսվում է կառուցել 4 հատ նմանատիպ քոտեջ:

3 տիպայնի քոտեջի հիմնական բնորոշիչներ՝

- կառուցապատման մակերես՝ 323.8քմ,
- բնակելի մակերես՝ 278.3 քմ,
- համարների քանակ՝ 4 համար,
- հանգստացողների քանակ՝ 8 անձ:

Նախատեսվում է կառուցել 1 հատ նմանատիպ քոտեջ:

4 տիպայնի քոտեջի հիմնական բնորոշիչներ՝

կառուցապատման մակերես՝ 403.6քմ,

- բնակելի մակերես՝ 347.5 քմ,
- համարների քանակ՝ 5 համար,
- հանգստացողների քանակ՝ 10 անձ:

Նախատեսվում է կառուցել 1 հատ նմանատիպ քոտեջ

Լողափի գոտու տարածքում պահանջվող կահավորման և սարքավորումների տարրեր

- հանդերձարան-խցիկներ (216 հանգստացողների 20 տոկոսի հաշվարկով՝ 40 մարդու համար 2 խցիկ 1,2-1,3մ^2 մակերեսով).
- տենտեր, հովանոցներ (200մ^2).

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- լողափի գոտու մանկական հատվածը կարող է կահավորվել տոբոգանով (h = 2,5- 3,0 մետր՝ մեկ ելքով դեպի լիճ), շվաքարաններով, ավազամաններով, ճոճանակներով, ընդ որում, մանկական հատվածի լողալու գոտու հատակը պետք է ունենա փոքր թեքություն՝ ոչ ավելի, քան 70սմ խորությամբ.

Բուֆերային գոտու տարածքի կահավորման և սարքավորումների տարրեր.

- դրամարկղային տաղավարները՝ 1 հատ,
- ցնցուղարանները՝ 5 ցնցուղ, խմելու ջրի 1 ծորակ:
- սանհանգույցներ, լողափի գոտուց առնվազն 50մ հեռավորության վրա՝ 4 հատ,
- մերձատար հարմար ուղիներին հարթակների վրա տեղադրված աղբի կոնտեյներներ, կողպվող կափարիչով:

Հողաբուսաշերտի հզորությունը կազմում է 15-20սմ: Հողային աշխատանքների ընթացքում այդ տարածքի բուսահողը 1500մ^3 ծավալով շինարարի կողմից նախատեսվում է պահել հատուկ վայրում և պաշտպանելու համար ծածկել համապատասխան ծածկով: Շինարարական աշխատանքների ավարտից հետո պահեստավորված բուսահողը կօգտագործվի կանաչապատման աշխատանքներում: Շինարարության ընդհանուր տևողությունը կկազմի 2 տարի: Շինարարական աշխատանքների ավարտից հետո հանգստի գոտու տարածքը նախատեսվում է կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատման մակերես՝ 11325քմ (75.5%), որից 1961.4քմ գեոցանցային կանաչապատում:

Հանգստի գոտու տարածքում տրանսպորտի կայանատեղին նախատեսված է մուտքային մասում: Հանգստի գոտու գազամատակարարում չի նախատեսվում, ջեռուցումը և տաք ջրամատակարարումը կիրականացվի էլեկտրականությամբ: Տարածքի էլեկտրամատակարարումը կիրականացվի Հեց ՓԲԸ-ի կողմից, համապատասխան պայմանագիր կնքելուց հետո:

Սենյակների և շենքերի կազմը նախատեսված է տեխնիկական առաջադրանքին համապատասխան:

Արտաքին պատերը նախատեսված են կանոնավոր ձևի տուֆ քարերով երեսպատված կոպտատաշ ֆելզիտ քարով /գյուղական շարվածք/, եզրային հատվածներում՝ սրբատաշ դարչնագույն տուֆ քարով, խարիսխային և հենապատերի հատվածքներում բազալտե խամքարե շարվածք, ներքին պատերն ու միջնորմերը՝ թեթևաբլոկ բետոնե:

Տանիքը նախատեսված է ցինկապատ փոշեներկված մետաղաթիթեղյա կղմիդրանման «Բանգա» տիպի:

Պատերի ներքին հարդարումը նախատեսված է իրականցնել միջանցքներում և սենյակներում՝ բարձորակ գաջե սվաղ ներկապատված լատեքսային ներկով, նախասրահում և դահլիճում՝ գաջե սվաղ ներկապատված դեկորատիվ ներկով, նկուղային հարկի սենյակներում՝ ցեմենտավազե սվաղ ներկապատված լատեքսային ներկով, սանհանգույցներում՝ ցեմենտավազե սվաղ երեսապատված հաղճասալերով:

Հատակները նախատեսված են՝ մամլագրանիտից միջանցքների և աստիճանավանդակների հատվածներում, հյուրասենյակներում՝ կավրոլին, պատշգամբում՝ բազալտե հղկված սալերով:

Նախասրահի հատակները, աստիճանները և սանդղահարթակները երեսպատվելու են բնական հատակի համար նախատեսված այլ քարերով:

Առաստաղների հարդարումը նախատեսված է իրականացնել սենյակներում՝ բարձորակ գաջե սվաղ ներկապատված լատեքսային ներկով, նախասրահում և միջանցքներում՝ կախովի տիպի, առևտրի կետում և դահլիճում՝ կախովի, ձայնակլանման միջոցառումներով ակուստիկային հաշվարկով ներկայացված առաջարկություններին համապատասխան:

Արտաքին դռները նախատեսված են ալյումինե, ապակեպատ ապակեփաթեթներով, ջերմամեկուսացված, հյուրանոցային և աշխատանքային սենյակներում՝ մոտ 1հց:

ՀՀ ԲՆԱԿԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ ՓՈՐՁԱՓԱՍԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՕՇԵՆԿԻ ՎՈԶԴԵՅՍՏՎԻՅԱ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

սանհանգույցներում՝ մետաղապլաստե՝ փայտի ֆակտուրայով, դահլիճի շքամուտքի հատվածներում՝ փայտյա, աստիճանավանդակների հատվածում՝ ալյումինե, ապակեպատ, հրակայուն:

Պատուհանները նախատեսված են մետաղապլաստե, քառախցիկ, արտերկրյա արտադրության պրոֆիներով, երկշերտ ապակեփաթեթներով, վիտրաժները՝ ալյումինե, ջերմամեկուսացված, երկշերտ ապակե փաթեթներով, արտաքին պատուհանագոգերը՝ բազալտե 40մմ հաստությամ սալերով, ներքին լուսամուտագորգերը՝ պլաստմասայից:

Հանգստի գոտու կոմունալ-կենցաղային նպատակով ջրամատակարարումը կիրականացվի ավտոցիստերնով, մասնագիտացված ընկերության կողմից պայմանագրային հիմունքներով, հետագայում կդիտարկվի մոտակա ջրագծին միանալու հնարավորությունը: Այդ նպատակով տարածքում նախատեսվում է տեղադրել ջրի 30մ^3 ծավալով բեզերվուար, որը կմիացվի ներքին ցանցին: Ներքին ցանցերը մոնտաժվում են պոլիպրոպիլենե խողովակներից Φ50;40;32;25;20մմ արտաքին ցանցը մոնտաժվում է Φ50մմ պոլիէթիլենային խողովակներից:

Կենցաղային կեղտաջրերը սանիտարական սարքերից ինքնահոս հավաքվում և հեռացվում են ներքին ցանցի միջոցով դեպի կոյուղու բակային ցանց: Կոյուղու բակային ցանցը նախատեսված է միացնել կեղտաջրերի մաքրման կենսաբանական կայանի: Ցանցերի վրա նախատեսված են դիտահորեր ստուգումներ կատարելու և հետագա շահագործելու համար:

Հանգստյան գոտու շրջակայքում կեղտաջրերի հեռացման կոլեկտոր չկա, ուստի հոսքաջրերի մաքրման համար ընտրվելու է կենսաբանական մաքրման կայան, որը կապահովի Սևանա լճի համար հաստատված նորմերը:

Նախատեսվում է տեղադրել ՅՈՒԲԱՍ 75 տիպի մաքրման կայան, ինչը լիովին համապատասխանում է հանգստի գոտու հանգստացողների առավելագույն քանակին՝ 106 մարդ: Առաջարկվող մաքրման կայանի արտադրողականությունը ըստ տեխնիկական պարամետրերի կազմում է 12 մ^3/օր:

Հանգստի գոտու տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել, ըստ ներկայացված նախնական գնահատման հայտի: Սակայն շինարարական աշխատանքների ժամանակ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլիացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով նախատեսվում է տեղափոխել պահպանվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրել համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը:

Նախատեսվող գործունեության տարածքին ամենամոտը «Արտանիշի» արգելոցն է՝ որը գտնվում է 5կմ հեռավորության վրա:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում,
- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- տարածքի հոսքերը կմիավորվեն մեկ բակային ցանցում և կմիացվեն սելավային ջրատարին,
- շինարարական աշխատանքների ընթացքում իրականացնել հողերի որակի մոնիթորինգ,
- շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ЦЕНТРАЛЬНАЯ ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЫ
ENVIRONMENTAL EXPERTISE CENTER
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շինարարական թափոնները կպահեստավորվեն տարածքում հատուկ նախատեսված վայրում և կծածկվեն,

-շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ,

- հանգստի գոտու տարածքում աղբահանության նպատակով տեղադրվելու են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Համաձայն ՀՀ Կառավարության 2008թ. դեկտեմբերի 18-ի թիվ 1563-Ն որոշման տեխնիկական բնութագրերի հանգստի գոտու տարածքը անհրաժեշտ է կահավորել աղբամաններով՝ 50 մարդու համար՝ 1 աղբաման հաշվարկով, ինչը լիովին ապահովված է ընկերության կողմից: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր,

- նախատեսվող գործունեության ընթացքում (ամբողջ շինարարության ժամանակահատված) առաջացող կենցաղային աղբ՝ 70-80կգ և շինարարական աղբ՝ 80մ^3 ծավալով կտեղափոխվի համայնքի կողմից հատկացված վայր,

- մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում

- տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում

Հանգստի գոտու շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

- փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ,

- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

- կենսաբազմազանության մոնիթորինգը,

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 350 հազ. դրամ, ամբողջ շինարարաության ընթացքում 700 հազ. դրամ:

Պատճառաբանական մաս. Շողակաթ համայնքում օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության նախարարությունը ինչպես նաև քաղաքաշինության կոմիտեն, Գեղարքունիքի մարզպետարանը և Շողակաթ համայնքը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ ЕРЕВАНСКИЙ ЦЕНТР ЭКСПЕРТИЗЫ ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER YEREVAN
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Փորձաքննական պահանջներ

- Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը՝ ըստ հայտով ներկայացված պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների այրումը խստիվ արգելվում է: Թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համայնքապետարանի հետ համաձայնեցված:
- Կանչապատման աշխատանքները իրականացնել առաջնորդվելով «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի դրույթներով և նախատեսվող ծառաթփային բուսականության տեսակները համաձայնեցնելով «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հետ:

Հանգստի գոտու լողափը կահավորել համաձայն ՀՀ Կառավարության 2008թ. դեկտեմբերի 18-ի թիվ 1563-Ն որոշման համաձայն:

-Կառուցապատման գործառույթները իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Դրախտիկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնքի Դրախտիկ գյուղի 1-ին փողոցի 62 հողամասում նախատեսվող հանգստի գոտու կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝ Հ. Մեսրոպյան

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՍՊԵՐՏԻԶՆԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ
ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ РА
ENVIRONMENTAL IMPACT EVALUATION EXPERTISE CENTER OF RA
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS